ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ԿԱՐՈՏՈՎ

Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու-Յորք քաղաքի Ս. Վարդան առաջնորդանիստ եկեղեցուն կից Ամերիկահայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպությունը ամեն տարի ամառային արձակուրդներին իր անդամներից մի խումբ է ուղարկում մայր հայրենիք, որպեսզի հայ երիտասարդները ավելի մերձենան մայր հայրենիքին, ծանոթանան հայրենի մշակույթին, խորացնեն իրենց հայոց պատմության և հայոց լեզվի գիտելիքները, սովորեն երգեր ու հայկական պարեր:

Սոյն տարվա հունիսի 21-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ և Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործնական աջակցությամբ, թվով 19 ամերիկահայ երիտասարդներ ժամանեցին մայր հայրենիք: Հայրենաբաղձ հյուրերը մեծ հուզումով առաջին անգամ ոտք դրեցին իրենց նախնիների հողի վրա: Ակնթարթը անմոռանալի կմնա նրանց սրտերում:

Խմբի ղեկավարներն էին Վաշինգտոն քաղաքի Ռիչմոնդ արվարձանի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արսեն քհն. Պարսամյանը և տիկին ծաղիկ Քելեկյանը: Նրանք տեղավորվեցին Երևանի «Արմենիա» հյուրանոցում: Մայր Աթոռն ու մշակութային կապի կոմիտեն համատեղ մշակել էին շուրջ մեկամսյա ուսման ու հանգստի բովանդակալից մի ծրագիր: Ազատ ժամերին նրանք հնարավորություն ունեցան լինելու Հայաստանի տեսարժան վայրերում և ծանոթանալու նրա մշակութային կյանքին: Նրանք այցելեցին վանական թանգարաններ, Էրեբունի, Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, ժողովրդական նվաճումների ցուցահանդես, ուխտագնացություններ կատարեցին և աղոթեցին Հայաստանի տասնյակ եկեղեցիներում ու վանքերում՝ Ս. Էջմիածին, Հռիփսիմե, Գայանե, Խորվիրապ, Երևանի Ս. Սարգիս, Սևանի Ս. Առաքելոց, Գեղարդ, Գոշավանք, Հաղարծին:

Հաճույքով ունկնդրեցին «Անուշ» օպերան, դիտեցին Հայաստանի պարի պետական անսամբլի, Թ. Ալթունյանի անվան երգի-պարի անսամբլի ելույթները:

Հիշարժան օր էր նաև հուլիսի 4-ը: Այդ օրը ամերիկահայ քանդակագործ պրոֆ. Խո-

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

բեն Տեր-Հարությանը, որ նույնպես գտնվում էր մար հայրենիքում, ընկերացավ երիտասարդներին դեպի Էջմիածնի Կոմիտասի անվան պատկերասրահ, ուր հանգամանորեն ու մեծ ոգևորությամբ ներկայացրեց իր անհատական ցուցահանդեսը: Այնտեղ բոլոր երիտասարդները հիացան Վարպետի տաղանդով ու հայրենասիրությամբ, քանի որ մեծ քանդակագործը իր ստեղծագործությունների մեծագույն մասը նվիրել էր իր հայրենիքին:

Հուլիսի 13: Ամերիկահայ երիտասարդները կրկին եկել են Ս. Էջմիածին՝ հրաժեշտի օրհնություն ստանալու համար: Նրանց ընդունեց Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ներկայությամբ լուսարարապետ գեր. Տ. Հուսիկ արք. Սանթուրյանի և դիվանապետ գեր. Տ. Ներսես եպս. Պոլապալյանի: Խմբի ղեկավար արժ. Տ. Արսեն քին. Պարսամյանը բոլորի անունից երախտագիտություն հայտնեց Վեհափառին՝ ջերմ հյուրընկալության համար: Այնուհետև Վեհափառ Հայրապետը իր հայրական խրատները տվեց երիտասարդներին, որպեսզի նրանք ուր էլ որ լինեն, չմոռանան իրենց մայրենի լեզուն, քանի որ այն աշխարհի կատարյալ լեզուներից է և մեր ազգային սրբություններից ու հպարտություններից: Հայոց լեզուն այնքան գեղեցիկ լեզու է, որ նույնիսկ շատ օտար մտավորականներ հիանալով ջանք են թափել ու սովորել այն: Վեհափառ Հայրապետը իր օրհնության խոսքը եզրանացրեց՝ կոչ ուղղելով երիտասարդներին

«Կուզեմ Հայրենիքի լույսի կաթիլները տանիք ձեզ հետ և բաշխեք բոլոր հայերուն, որոնք կարոտ են: Տարեք նրա և մեր օրհնությունները և մաղթանքները ձեր բոլորին: Վերադարձեք և օգտակար դարձեք հայոց ազգին»:

Հաջողություն ձեզ, սիրելի հայորդիներ, ձեր նվիրական առաքելության մեջ:

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ